

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2018Թ. ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

ԹԻՎ 12

Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2018թ. հունվար-դեկտեմբերին

%

Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՍԸՆՆ) երկու նիշ մակարդակ	2018թ.											
	հուն- վարը	փետր- վարը	մարտը	ապ- րիլը	մա- յիսը	հու- նիսը	հու- լիսը	օգոս- տոսը	սեպ- տեմ- բերը	հոկ- տեմ- բերը	նոյեմ- բերը	դեկ- տեմ- բերը
	նախորդ ամսվա նկատմամբ											
Սպառողական գների ինդեքս - ընդամենը	102.8	99.5	100.1	99.7	99.0	98.4	98.8	100.6	100.3	100.1	101.0	101.5
<i>այդ թվում՝</i>												
աննդամթերք և ոչ ակոհոլային խմիչք	105.8	98.8	99.9	98.8	97.2	96.1	97.1	101.7	101.2	99.5	102.1	103.8
ակոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	100.0	100.4	100.1	100.3	100.6	101.3	100.4	100.3	100.1	100.1	100.3	99.9
հագուստ և կոշիկ	96.4	98.1	101.5	102.5	100.8	95.7	96.6	97.7	102.3	110.4	102.5	97.5
բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ վառելիքի այլ տեսակներ	100.3	99.7	99.8	99.9	100.0	99.9	100.1	100.1	99.7	100.4	100.2	100.4
տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	100.4	100.4	99.9	100.2	99.7	101.2	99.4	99.6	99.5	100.4	99.7	100.2
առողջապահություն	100.6	101.0	101.2	100.0	100.2	100.5	100.0	100.0	100.2	99.7	100.0	100.0
տրանսպորտ	105.5	100.5	100.4	100.6	100.7	100.0	100.7	100.3	98.4	98.8	100.3	99.8
կապ	100.0	100.0	100.0	99.9	100.0	100.0	100.0	99.6	100.0	100.0	100.0	100.0
հանգիստ և մշակույթ	102.6	100.2	99.6	98.5	98.9	97.6	99.1	100.0	100.3	99.4	100.3	101.4
կրթություն	101.1	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	101.2	100.0	100.0	100.0
ռեստորաններ և հյուրանոցներ	100.8	100.2	100.2	101.1	100.5	100.4	101.6	100.0	99.5	99.3	99.7	99.6
տարբեր ապրանքներ և ծառայություններ	99.9	99.9	100.1	100.3	99.8	100.4	99.7	99.9	100.0	100.3	100.0	100.4

%

Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՍԸՆՆ) երկու նիշ մակարդակ	2018թ.	
	դեկտեմբերը 2017թ. դեկտեմբերի նկատմամբ	հունվար-դեկտեմբերը 2017թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
Սպառողական գների ինդեքս - ընդամենը	101.8	102.5
<i>այդ թվում՝</i>		
աննդամթերք և ոչ ակոհոլային խմիչք	101.6	102.3
ակոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	103.9	104.2
հագուստ և կոշիկ	100.9	103.7
բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	100.5	100.2
տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	100.7	101.5
առողջապահություն	103.7	104.4
տրանսպորտ	105.9	107.9
կապ	99.4	99.7
հանգիստ և մշակույթ	97.6	101.2
կրթություն	102.4	102.4
ռեստորաններ և հյուրանոցներ	102.8	103.5
տարբեր ապրանքներ և ծառայություններ	100.7	100.2

Սպառողական գների ինդեքսի փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում ըստ սպառման հիմնական խմբերի

%

	2018թ.											
	հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	հուլիսը	օգոստոսը	սեպտեմբերը	հոկտեմբերը	նոյեմբերը	դեկտեմբերը
	նախորդ ամսվա նկատմամբ											
Սպառման ապրանքներ	104.1	99.2	100.0	99.4	98.4	97.6	98.2	100.8	100.8	100.3	101.4	102.1
<i>այդ թվում՝</i>												
սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք (ներառյալ ալկոհոլային խմիչք և ծխախոտ)	105.2	98.9	99.9	99.0	97.5	96.6	97.5	101.5	101.1	99.6	102.0	103.4
ոչ պարենային ապրանքներ	101.6	99.9	100.3	100.4	100.1	99.7	99.5	99.5	100.4	101.8	100.4	99.6
Ծառայություններ	100.4	100.1	100.3	100.2	100.2	99.9	100.1	100.1	99.4	99.7	100.2	100.3

%


	2018թ.	
	դեկտեմբերը 2017թ. դեկտեմբերի նկատմամբ	հունվար-դեկտեմբերը 2017թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
Սպառման ապրանքներ	102.3	103.2
<i>այդ թվում՝</i>		
սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք (ներառյալ ալկոհոլային խմիչք և ծխախոտ)	101.8	102.5
ոչ պարենային ապրանքներ	103.2	104.5
Ծառայություններ	100.8	101.2

Սպառողական գներ: 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձագրվել է 1.5% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 3.8% գնաճով: Սննդամթերքի (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ) գները նշված ժամանակահատվածում աճել են 3.4%-ով, ծառայությունների սակագները՝ 0.3%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.4% գնանկում:

2018թ. հունվար-դեկտեմբերին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.1%, ինչը 0.1%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված համապատասխան ցուցանիշից (0.2% հավելաճ):

Սպառողական գների հավելաճը 2009-2018թթ. դեկտեմբերին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



2018թ. դեկտեմբերին 2017թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 101.8%, այդ թվում, սննդամթերքինը (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ)՝ 101.8%, ոչ պարենային ապրանքներինը՝ 103.2%, ծառայությունների սակագներինը՝ 100.8%, իսկ հունվար-

դեկտեմբերին 2017թ. հունվար-դեկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 102.5%, 102.5%, 104.5% և 101.2%:


Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 1.1-1.7%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում արձանագրվել է սպառողական գների 1.6% հավելում:

Մենդամթերքի գներ: 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ակոհոլային խմիչքի 3.8% գնաճ, ինչի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել մրգի և բանջարեղենի՝ համապատասխանաբար 12.5% և 25.2% գնաճը:

Բանջարեղենի ապրանքախմբում¹ 2018թ. դեկտեմբերին 2017թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 6.3% գնանկում, իսկ 2018թ. նոյեմբերի համեմատ՝ 25.2% գնաճ:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2016-2018թթ. հունվար-դեկտեմբերին

նայադրդ ամսվա նկատմամբ, %




Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ բանջարեղենի գներն աճել են 15.5-28.8%-ով, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վաղարշապատում: Մայրաքաղաքում բանջարեղենի գների մակարդակն աճել է 26.3%-ով:

Մրգի ապրանքախմբում¹ 2018թ. դեկտեմբերին 2017թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 10.0%, իսկ 2018թ. նոյեմբերի համեմատ՝ 12.5% գնաճ:

Մրգի գների փոփոխությունները 2016-2018թթ. հունվար-դեկտեմբերին

նայադրդ ամսվա նկատմամբ, %



¹ 2018թ. նոյեմբեր-դեկտեմբերին 2017թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների տոկոսային փոփոխությունների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ մրգի գներն աճել են 4.4-15.0%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է մայրաքաղաքում:

2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ մրգի և բանջարեղենի ապրանքախմբերի ընդհանուր գնաճը կազմել է 20.9%: Վերը նշված ապրանքախմբերը սպառողական զամբյուղում ունենալով 8.36% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի աճին 1.8 տոկոսային կետով:

Մսամթերքի ապրանքախմբում 2018թ. դեկտեմբերին 2017թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 8.2%, իսկ 2018թ. նոյեմբերի համեմատ՝ 0.7% գնաճ:

Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ արձանագրվել է մսամթերքի 0.2-1.6% գնաճ (մայրաքաղաքում մսամթերքի գներն աճել են 0.8%-ով), իսկ 2-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Յուղերի և ճարպերի ապրանքախմբում 2018թ. դեկտեմբերին 2017թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 3.1%, իսկ 2018թ. նոյեմբերի համեմատ՝ 0.6% գնաճ:

Հանրապետության դիտարկված 4 քաղաքներում 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ յուղերի և ճարպերի գներն աճել են 0.1-1.0%-ով (ամենաբարձր գնաճն արձանագրվել է մայրաքաղաքում), 4-ում գրանցվել է 0.3-0.1% գնանկում, իսկ 3-ում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2018թ. դեկտեմբերին 2017թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 2.3% գնանկում, իսկ 2018թ. նոյեմբերի համեմատ՝ 0.4% գնաճ, ինչին մեծապես նպաստել է ձվի 1.3% գնաճը (վերջին 5 ամիսներին ձվի ընդհանուր գնաճը կազմել է 43.0%):

Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում գրանցվել է 0.6-2.4% գնաճ, 2-ում՝ 0.2% գնանկում, իսկ մեկում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ: Մայրաքաղաքում կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբի գները նվազել են 0.2%-ով:

Չկնամթերքի ապրանքախմբում 2018թ. դեկտեմբերին 2017թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 5.4% գնաճ, իսկ 2018թ. նոյեմբերի համեմատ՝ 0.4% գնանկում:

Հանրապետության դիտարկված 5 քաղաքներում 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ ձկնամթերքի գները նվազել են 3.3-0.1%-ով, իսկ 6-ում գրանցվել է 0.1-1.4% գնաճ: Մայրաքաղաքում ձկնամթերքի գների մակարդակը նվազել է 0.1%-ով:


2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է հացաբուլկեղենի և ձավարեղենի 0.2% գնաճ, իսկ շաքարի և շաքարավազի, ոչ ալկոհոլային խմիչքի, սուրճի, թեյի, կակաոյի, ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների ապրանքախմբերում՝ 0.1% գնանկում:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 0.4% գնանկում: Նշված ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է հագուստի՝ 2.6%, տարբեր տեսակի կոշիկեղենի՝ 2.5%, բնակարանի նորոգման և սպասարկման նյութերի, կահույքի և կահավորանքի՝ 1.0%, խոշոր կենցաղային սարքերի, վառելանյութի և քսայուղերի՝ 0.5%, գրասենյակային պարագաների՝ 0.3%, կենցաղային և այգեգործական գործիքների 0.1% գնանկում: Դրան զուգընթաց, կենցաղային փոքր էլեկտրական սարքերի գներն աճել են 0.1%-ով, մաքրող, լվացող միջոցների և բնակարանի խնամքի այլ պարագաներինը՝ 0.7%-ով, գորգերինը և հատակի ծածկերինը՝ 0.8%-ով, ոսկերչական զարդերինը՝ 1.0%-ով, իսկ ապակե ամանեղենի, ճաշասպասքի և տնային կահ-կարասու ապրանքախմբում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գների մակարդակը նվազել է համապատասխանաբար 2.9% և 2.4%-ով: 2018թ. դեկտեմբերին 2017թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ 6.1% և 20.4% գնաճ:

Բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությունները 2016-2018թթ.

2015թ. նկատմամբ, %




Հանրապետության դիտարկված 4 քաղաքներում 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների գները նվազել են 1.0-0.1%-ով, 3-ում գրանցվել է 0.1-0.3% գնաճ, իսկ 4-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գների մակարդակը նվազել է 0.7%-ով:

Ծառայությունների սակագներ: Մատուցված ծառայությունների ոլորտում 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ սակագներն աճել են 0.3%-ով, ինչին մեծապես նպաստել է հանգստի կազմակերպման համալիր ծառայությունների՝ 3.8% և մարդատար տրանսպորտի ծառայությունների սակագների 0.3% հավելաճը (պայմանավորված օդային տրանսպորտով միջազգային չվերթների ծառայությունների սակագների 0.9% հավելաճով): Միաժամանակ, հանրապետությունում գրանցվել է բնակարանի նորոգման և սպասարկման ծառայությունների սակագների 0.3% նվազում, իսկ կենցաղային սարքերի նորոգման, կապի, կրթության, բժշկական, սպասարկման, իրավաբանական, հանգստի և մշակութային միջոցառումների հետ կապված ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ արձանագրվել է ծառայությունների սակագների 0.2-0.5% հավելաճ, այդ թվում, ամենաբարձր հավելաճը գրանցվել է ք. Գյումրիում: Մայրաքաղաքում ծառայությունների սակագների մակարդակն աճել է 0.3%-ով:


ՀՀ սպառողական շուկայում սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի (ներառյալ ալկոհոլային խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2018թ. հունվար-դեկտեմբերին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



Արտարժույթի շուկա: 2018թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ սպառողական գների 1.5% հավելաճն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.3% նվազումով (ՀՀ դրամն արժևորվել է): 2018թ. դեկտեմբերին 2017թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է 1.8% և 0.3%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է 2.6% և 0.1%: 2018թ. դեկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 484.7 դրամ, ինչը գերազանցել է 2017թ. դեկտեմբերի համապատասխան ցուցանիշը 0.3%-ով (483.2 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2017-2018թթ. հունվար-դեկտեմբերին
 նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների ինդեքսները ՀՀ-ում

%

	2018թ.			
	Նոյեմբերը		Դեկտեմբերը	
	2018թ. հոկտեմբերի նկատմամբ	2017թ. նոյեմբերի նկատմամբ	2018թ. նոյեմբերի նկատմամբ	2017թ. դեկտեմբերի նկատմամբ
Միրգ, բնյամենը	107.3	102.0	112.5	110.0
<i>այդ թվում՝</i>				
Խնձոր	101.4	105.9	115.0	108.5
Տանձ	105.8	112.5	114.9	110.2
Նուռ	97.7	105.4	112.5	104.1
Խաղող	126.6	85.6	127.6	100.6
Աղամաթուզ (բանան)	92.1	73.4	109.2	76.9
Խուրմա և արքայանարինջ	97.4	101.0	113.0	98.4
Նարինջ	66.3	91.3	87.2	91.1
Մանդարին	74.1	80.4	97.1	86.5
Կիտրոն	86.2	84.0	90.0	74.7
Բանջարեղեն և կարտոֆիլ, բնյամենը	118.7	93.6	125.2	93.7
<i>այդ թվում՝</i>				
Կաղամբ	86.8	114.2	112.9	124.9
Ծաղկակաղամբ	81.0	75.2	183.7	190.3
Կանաչ սոխ	102.4	106.7	119.1	107.4
Խառը կանաչեղեն	114.4	114.6	118.6	118.0
Լոլիկ	132.2	95.7	134.3	88.2
Վարունգ	238.2	90.3	170.1	83.1
Սմբուկ	197.0	79.3	204.5	77.2
Պղպեղ	131.7	133.9	132.3	110.8
Դոմիկ	251.7	67.9	207.6	97.5
Գազար	95.7	83.3	111.5	84.9
Ճակնդեղ	91.3	114.6	102.6	115.3
Գլուխ սոխ	117.5	88.3	124.6	101.8
Սխտոր	96.7	50.6	100.5	51.8
Սունկ	99.4	94.5	102.9	93.7
Կարտոֆիլ	110.3	86.4	111.1	96.8

Մպառոդական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում¹

%

	2017թ. դեկտեմբերը 2016թ. դեկտեմբերի նկատմամբ	2018թ.											նոյեմբերը 2017թ. դեկտեմ- բերի նկատմամբ
		հուն- վարը	փետր- վարը	մարտը	ապ- րիլը	մա- յիսը	հու- նիսը	հու- լիսը	օգոս- տոսը	սեպ- տեմ- բերը	հոկ- տեմ- բերը	նոյեմ- բերը	
		նախորդ ամսվա նկատմամբ											
Ավստրիա	102.3	99.0	100.3	100.9	100.2	100.1	100.1	99.4	100.0	101.2	100.5	100.0	101.6
Բելգիա	102.1	98.8	101.6	100.0	100.4	100.3	100.3	99.3	101.4	99.7	100.7	99.8	102.4
Բուլղարիա	101.8	100.2	100.2	99.8	100.3	100.4	100.5	101.0	100.3	99.7	100.2	99.7	102.3
Հունգարիա	102.2	100.3	100.2	100.1	100.7	100.7	100.3	100.3	100.0	100.3	100.5	99.7	103.2
Գերմանիա	101.6	99.0	100.5	100.4	99.9	100.6	100.1	100.4	100.0	100.4	100.1	100.1	101.5
Հունաստան	101.0	98.8	100.1	101.2	101.0	100.1	100.9	98.6	99.8	101.4	100.5	98.4	100.7
Դանիա	100.8	99.7	100.6	100.0	100.6	100.2	99.9	100.8	99.5	99.8	100.3	99.7	101.1
Իռլանդիա	100.5	99.3	100.9	100.4	99.8	100.6	100.1	100.4	100.3	99.7	99.8	99.6	100.9
Իսպանիա	101.2	98.5	100.1	101.2	100.8	100.9	100.2	98.8	100.1	100.6	100.7	99.8	101.7
Իտալիա	101.0	98.5	99.5	102.3	100.5	100.3	100.2	98.6	99.8	101.7	100.2	99.7	101.3
Կիպրոս	99.6	98.1	101.2	100.9	101.1	101.4	101.0	99.8	101.2	99.2	99.7	98.5	102.0
Լատվիա	102.2	99.9	100.2	101.3	100.3	100.5	100.7	99.2	100.0	100.6	100.3	99.8	102.9
Լիտվա	103.8	100.0	99.9	100.4	100.7	100.5	99.9	99.5	99.6	101.4	100.5	99.8	102.3
Լյուքսեմբուրգ	101.6	99.1	101.2	100.0	100.4	100.6	100.3	99.1	101.4	100.3	100.2	99.8	102.6
Մալթա	101.3	98.8	100.6	100.9	102.6	101.4	101.3	100.2	100.7	99.2	98.8	97.1	101.5
Նիդերլանդներ	101.2	99.6	100.7	100.2	100.9	100.4	99.5	101.1	100.1	99.3	100.5	99.5	101.9
Լեհաստան	101.7	100.2	99.6	100.0	100.5	100.2	100.1	99.8	99.8	100.3	100.4	100.0	100.9
Պորտուգալիա	101.6	98.8	99.4	102.2	101.0	100.8	100.0	99.6	99.3	101.5	99.5	99.0	101.0
Ռումինիա	102.6	100.7	100.2	100.3	100.4	100.6	100.0	99.6	100.1	100.6	100.6	99.7	102.9
Սլովակիա	102.0	100.9	100.2	100.2	100.6	100.0	100.1	99.8	100.2	100.0	100.1	99.9	102.0
Սլովենիա	101.9	99.4	100.6	100.4	100.4	101.0	100.0	99.2	100.0	100.5	100.4	100.1	102.1
Միացյալ Թագավորություն	103.0	99.5	100.4	100.1	100.4	100.4	100.0	100.0	100.7	100.1	100.1
Ֆինլանդիա	100.5	99.7	100.5	100.2	100.3	100.0	100.2	99.8	100.1	100.3	100.3	100.1	101.5
Ֆրանսիա	101.2	99.9	100.0	101.1	100.2	100.5	100.0	99.9	100.5	99.8	100.1	99.8	101.8
Խորվաթիա	101.3	99.8	99.9	100.5	100.9	100.3	100.8	100.1	100.0	99.8	100.2	99.5	101.6
Չեխիայի Հանրապետություն	102.2	100.7	99.9	100.0	100.3	100.5	100.4	100.2	100.0	99.6	100.4	99.7	101.6
Շվեդիա	101.7	99.1	100.8	100.3	100.4	100.3	100.2	100.6	99.7	100.5	99.8	99.9	101.7
Էստոնիա	103.8	100.1	101.0	100.1	100.6	100.5	101.0	100.2	100.6	99.7	100.5	99.2	103.6
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-28)²	101.7	99.3	100.2	100.7	100.3	100.5	100.1	99.8	100.2	100.4	100.2	99.9	101.6
Հայաստան	102.6	102.8	99.5	100.1	99.7	99.0	98.4	98.8	100.6	100.3	100.1	101.0	100.3
Ռուսաստան	102.5	100.3	100.2	100.3	100.4	100.4	100.5	100.3	100.0	100.2	100.4	100.5	103.4
Բելառուս	104.6	100.8	100.9	100.8	100.3	99.7	100.4	99.8	100.1	100.8	100.5	100.6	104.8
Ուկրաինա	113.7	101.5	100.9	101.1	100.8	100.0	100.0	99.3	100.0	101.9	101.7	101.4	108.9
Ղազախստան	107.1	100.6	100.7	100.5	100.4	100.2	100.2	100.1	100.2	100.4	100.4	100.9	104.6
Ղրղզստան	103.7	100.6	100.9	99.7	99.5	99.5	99.8	99.3	99.6	100.1	100.3	100.7	99.8
Մոլդովա	107.3	100.0	100.2	100.1	100.5	100.0	100.0	98.8	99.8	100.1	100.4	100.4	100.4
Տաջիկստան	106.7	100.4	99.9	99.0	100.5	100.6	100.5	101.1	100.8	101.1	100.7	100.4	...
Վրաստան	106.7	100.6	100.2	99.6	99.8	100.0	99.4	99.7	100.5	100.3	100.3	100.7	101.1
Կանադա	101.9	100.7	100.6	100.3	100.3	100.1	100.1	100.5	99.9	99.6	100.3	99.6	102.1
Նորվեգիա	101.5	99.7	101.1	100.3	100.5	100.0	100.8	100.9	99.6	100.5	99.8	100.5	103.9
Բրազիլիա	102.9	100.3	100.3	100.1	100.2	100.4	101.3	100.3	99.9	100.5	100.5	99.8	103.6
Կորեայի Հանրապետություն	101.5	100.4	100.8	99.9	100.1	100.1	99.8	100.2	100.5	100.7	99.8	99.3	101.6
Չինաստան	101.8	100.6	101.2	98.9	99.8	99.8	99.9	100.3	100.7	100.7	100.2	99.7	101.8
ԱՄՆ	102.1	100.5	100.5	100.2	100.4	100.4	100.2	100.0	100.1	100.1	100.2	99.7	102.2
Թուրքիա	111.9	101.0	100.7	101.0	101.9	101.6	102.6	100.5	102.3	106.3	102.7	98.6	120.8
Շվեյցարիա	101.1	99.5	100.3	100.3	100.2	100.4	100.0	100.4	100.0	100.0	100.2	99.6	100.8
Ճապոնիա	101.0	100.1	100.0	99.7	99.9	100.1	99.9	100.1	100.5	100.1	100.3

... - Տվյալները բացակայում են:

¹ Տեղեկատվությունը պատրաստվել է ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի կայքում զետեղված «2018թ. նոյեմբերին Ռուսաստանի և արտասահմանյան երկրների սպառողական գների ինդեքսների վերաբերյալ տեղեկանք»-ի հիման վրա:

² Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«Մպառոդական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2019թ. հունվարին» մամուլի հաղորդագրության հրատարակման ժամկետը, համաձայն «2019 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2019թ. փետրվար ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-301, հավելված 3, էջ 112):